

սեյիս յօրանջելը, խիստ արամուլթեան ժամանակ կոկորդի մէջ մի բան մնացած լինելու զգայութիւնը, զժուար գրութեան ժամանակ կոկորդի խտուարը և սաստկացած կուլ տալը, «սրտի անձկութիւնը» ահի ժամանակ, կաշուի պաղ և տաք և ընդհանուր տեղախոն քրտնելը, կաշուի կարմրելը, այլև մի քանի ուրիշ սիմպտոմներ, որոնք թէպէտ թերեւս գոյութիւն ունին, բայց դեռևս միւսների շարքից որոշակի կերպով չեն դատուած և առանձին անուն դեռ չեն ստացել։ Սպեկուլերը և Մանտեգացը կարծում են, որ ոչ միայն ահի, այլ նաև բազմաթիւ այլ գրգռմունքների ժամանակ տեղի ունեցող գոզը մի դուռ հիւանդական երևոյթ է։ Նոյն կերպ են սարսափի նաև ուրիշ ուժղին արտայայտութիւնները, որոնք յնասակար են լինում նոյն էակի համար։ Նեարդերի սիստեմի նման մի բարդ օրգանիզմում պէտք է որ բազմաթիւ պատահական ռեակցիաներ գոյութիւն կունենան, այդ ռեակցիաները չէին կարող բոլորովին ինքնակախ կերպով զարգանալ՝ միմիայն օրգանիզմին օգտակար լինելու պատճառով։ Մովախար, խտուար, ամաչկոտութիւնը, երաժշտասիրութիւնը, զանազան արեւցնող խմիչքների հակումը, պէտք է որ պատահական կերպով յառաջացած լինին Անհեթեթ բան կը լինէր պնդել, իբր թէ յուզական ռեակցիաներից և ոչ մէկը այդպիսի կեղծ — պատահական կերպով չի կարող առաջ գտլ։



ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԸ ՇՎԵԴԻԱՅՈՒՄ

(Mіръ Божій, октябрь, 1903 г.)

Շվեդիայում համալսարանական շարժումը իւր բնաւորութեամբ փոքր ինչ տարբերւում է միւս եւրոպական երկրներում եղած նոյնատեսակ շարժումներից։ Այդ շարժման առաջ գալուն զարկ տուեց առաջին անգամ Ուպսալա հին համալսարանական քաղաքը։ 1892 թուին Ուպսալայում ժողովրդական բարձրագոյն դպրոցների ուսուցիչների համաժողով կար. պրօֆեսօր Լինդել, որ Շվեդիայում յօգուտ մանկավարժական բարեփոխութեան առաջ եկած շարժման գլուխ էր կանգնել, այդ համաժո-

դովում ճառ խօսեց համալսարանական և ժողովրդական
 դասախօսութիւնների միմեանց մօտեցնելու անհրաժեշտու-
 թեան մասին: Այդ նպատակով նա առաջարկեց հաստա-
 տել համալսարաններում մասնագիտական դասընթացներ
 ուսուցիչների համար: Սկզբում նրա յայտնած միտքը դար-
 մանք առաջացրեց և շվեդական մանկավարժական թեր-
 թերքը մի ամբողջ տարի շարունակ դրում էին այդ խնդրի
 մասին: Ի միջի այլոց այդ խնդիրը մի քանի ջերմ պաշտ-
 պաններ ունեցաւ յանձինս համալսարանական պրօֆեսոր-
 ների և ուղիղ մի տարի յետոյ Ուօսալայում բացուեցան
 առաջին ամառային բարձրագոյն դասընթացները, որոնք
 մեծ յաջողութիւն ունեցան: 329 ուսուցիչներ և ուսուց-
 շուհիներ յաճախում էին այդ դասընթացները. դասախօ-
 սում էին 17 խորօթեսօրներ հեռեեալ առարկաներից.—
 ժողովրդական հէքիաթներ, հին հրէից պատմութիւն, հռով-
 մէական կայսրութեան պատմութիւն, XVI դարու շվե-
 դական կառավարութեան կազմակերպութիւնը, բուդդա-
 յականութիւն, հնչիւնների կազմութիւնը լեզուի մէջ, շվե-
 դական լեզուի քերականութեան ներածութիւն, յիշողու-
 թեան հոգեբանութիւն, Լիւտերի վերանորոգութիւնը,
 կաթնասուններ, քարածուխ, բոյսերի կեանքը, երկրաբա-
 նութիւն, արեք և անշարժ աստղերը, աչքը և նորա
 գործողութիւնը:

Երկու տարուց յետոյ ոչ ոք այլևս չէր կարող կաս-
 կածել Լինդելի ունեցած յաջողութեան մասին: Ունկնդիր-
 ների թիւը աճում էր և 1895 թուին դասընթացները
 յաճախում էին արդէն 491 ուսուցիչներ: Մրադրի մէջ
 մուծուեցաւ նաև ֆրանսերէնի, անգլիերէնի և գերմանե-
 րէնի դասընթացը: 1897 թուին կառավարութիւնը դաս-
 րնթացների համար 1400 ֆրանկի մի փոքրիկ նպաստ նշա-
 նակեց և դասընթացները սկսեցին արագ կերպով դար-
 գանալ: Այդ տարուան ընթացքում յառաջագիմութիւնը
 սպասածից շատ աւելի էր. հաւաքուած էին 804 ունկն
 դիրներ երկու սեռից, ծրագիրը արդէն զգալի կերպով
 ընդարձակուած էր և հաւասարեցրած համալսարանական

գասաւանդման, իսկ գասընթացները, ինչպէս համալսարաններում, բաժանուած էին առանձին խմբերի, XIX դարի սրտամութեան գասնթաց, ժանկավարժական գասընթացներ, քաղաքական գիտութիւններ, կենդանի լեզուներ են: Շփեղացիների համար հաստատուած էր նորփեղեխական լեզուի գասընթաց, իսկ նորփեղեխացիների և գանխացիների համար՝ շփեղական: Գասաւանդման եզանակը իսկական համալսարանական լինելով հանդերձ, գասընթացները պահպանում են կատարեալ ազատութիւն, շենթարկուելով ոչ մի վերահսկողութեան համալսարանի վերատեսչի կողմից: Երեք տարին մի անգամ հաւաքում են համալսարանի այն սլոփեսորները, որոնք ցանկանում են մասնակցութիւն ունենալ այդ գործում և ընտրում են մի յանձնաժողով, որին և յանձնում է գասընթացների կազմակերպութիւնն ու վարչութիւնը:

Այսպիսով Շփեղեխյում ժողովրդական համալսարանական գասընթացները հիմնուած են ոչ թէ ժողովրդի, այլ ժողովրդական ուսուցիչների համար: Ժողովրդի համար կան բարձրագոյն դպրոցներ 1860 թուին հիմնուած, գանխականի նմանութեամբ, որոնք հնարաւորութիւն են տալիս գիւղացոց տղաներին և աղջիկներին բարձրագոյն կրթութիւն ստանալու, որ լրացնում է դպրոցում ստացածը: Բարձրագոյն դպրոցները կարող են յաճախել 18-ից մինչև 30 տարեկանը, այսինքն այնպիսի հասակում, երբ մարդ սկսում է գիտակցօրէն ձգտել գիտութեան և գնահատել նրա արժէքը: Չմեռը, երբ գաշտային աշխատանքները գաղարում են, այդ դպրոցները բացւում են տղամարդկանց համար, իսկ ամառը՝ կանանց, սակայն հիւսիսային Շփեղեխյում երկու սեռի համար ևս ընդհանուր են: Գասընթացը շարունակուում է կէս տարի և իւրաքանչիւրը վճարում է 42 ֆրանկ: Շփեղական այդ ժողովրդական բարձրագոյն դպրոցները ունին իրենց առանձին ուսուցչական մարմինը, բազկացած մեծ մասամբ համալսարանական կրթութիւն և գիտնական աստիճան ունեցող մարդկանցից, որոնք իրենց նուիրել են ժողովրդական

կրթութեան՝ Այդ դպրոցներում դասարաններ չկան, այլ միմիայն դասախօսութիւններ են կարգացում, ինչպէս համալսարանում: Ներկայումս Շվեդիայում բացուած են այդպիսի 30 դպրոցներ, սակայն դրանց թիւը շուտով կաւելանայ:

Ժողովրդական բարձրագոյն դպրոցներ բացում են բացառապէս միմիայն գիւղերում, իսկ քաղաքներում՝ «բանուորական դպրոցներ», որոնք իրենց կազմակերպութեամբ յիշեցնում են մասամբ Պարիզում բացուած երեկոյեան դասընթացները բանուորների համար: Դրանք ևս բացուած են մասնաւոր նախաձեռնութեամբ, սակայն քաղաքային վարչութիւններն ու կառավարութիւնը նպաստներ են նշանակում նրանց համար: Համալսարանական քաղաքներում պրոֆեսորներն ևն դասախօսութիւններ կարգում, իսկ ուրիշ տեղերում՝ մասնագիտական դասընթացների (լիցէ) ուսուցիչները, բժիշկները և փաստաբանները: Դասընթացների ծրագիրը բազմակողմանի է:

Սկզբում պրոֆեսորներն ու ուսուցիչները ոչ մի վարձատրութիւն չեն ստանում իրենց դասախօսութիւնների համար, իսկ այժմ՝ նշանակուած է մի փոքրիկ վարձատրութիւն, որովհետեւ ղեկավարող յանձնաժողովը սկզբունքով հակառակ է ձրի աշխատութեան: Այժմ արդէն «ամառնային բարձրագոյն դասընթացները», «Ժողովրդական բարձրագոյն դպրոցները» և «բանուորական դպրոցները» հաստատուն հիմնարկութիւններ են կազմում, որոնց անսպաւան օգտակարութիւնը ճանաչուած է Շվեդիայի բոլոր քաղաքական կուսակցութիւնների կողմից: